թուեցաւ յիս, զի բազում անգամ անկարգութենէ պատճառէ վնաս և աւերում յազգին Հայոց 'ի վերայ աշխարհին և ընակողաց արանց այնքան բազում եղև զի յատկութիւն վնասոյ ոչ ոք կարասցէ 'ի շարս գրչաւ արկանել, թէպէտ ես ունեմ բազում վկայութիւն 'ի պատմութենէ Հայոց և այլ ազգաց առ այս, այլ ոչ կամիմ զզուեցուցանել ունկն ընթերցողիդ վասն զի ընթերցողդ եթէ կամիս կենալ և մնալ 'ի ներքոյ հաւատոյ քոյ, որում հաւատացեալ ես, երկու և երիս վկայութիւնս միայն բաւական քեզ լինիցի հաստատել 'ի միտս քոյ 'ի վերայ բանիս իմոյ, այլ ոչ ես և ոչ ընթերցողդ և ոչ ոք 'ի ազգէն Հայոց ոչ կարէ յիշեցուցանել 'ի միտս իւր նախատինք և ամօթանք որում կրեցաք նախնում և 'ի ժամանակիս այսմիկ, և եթէ այն որ կրելոց եմք 'ի ժամանակ ապագայ, եթէ գուցէ կալով մնասցէ վարք մեր և ընթանայցէ անկարգութեամբ և անօրէնութեամբ՝ գործս մեր որպէս յառաջնում. վասն զի 'ի մէջ բազում յանցանաց անցելոց, ճանաչի ապագան յատկապէս այժմոյս պարզապէս երևի որ 'ի պատճառէ անկարգութենէ մերմէ 'ի չորից կողմանց դրացեաց աշխարհէ մերմէ հրամայեցին 'ի վերայ մեր զոր ինչ կամեցան և մեք ոչ գիտելով և ոչ ճանաչելով պատիւն ազատութեան մերոյ, եղաք իբր ձի 'ի տան չափառի պատրաստի ով որ կամեցաւ